

«ԼԱՎ ՉԻ, ՏՂԵՐՔ, ՇԱՌ ՎԱՏ Է»

Նախ գործարան առ գործարան, ամբողջ գործարանային տնտեսությունը, ապա գերատեսչություն առ գերատեսչություն կառավարման ողջ համակարգը, հիմա էլ հոգևո՞ր ոլորտը... և բոլորը հանուն մի բանի - միլիոնանց հաստոցը սղոցեմ, միլիարդանց կառուցը քանդեմ, միջից հնձ համար տասը ռուբլու ոսկի հանեմ:

Լավ չի, տղերք, շատ վատ է:

Եվ եթե գործարանների լրման ու կողոպուտի հիմարությունը ինպերիային՝ ոչ մեզ, վճասելու խարկանքը ուներ, գերատեսչությունների ջախջախումը անիջալ վարչակարգի վրա՝ ոչ մեր խեղճ գլուխների, հաղթանակի պատրանքը ուներ, ապա այստեղ՝ հոգևոր ոլորտում, ոչ մի պատրանք չպետք է ունենանք - սա մեր իսկ ծանր պարտությունն է. սա վկայությունն է միայն մի իսկության, որ մենք ոչնչով չենք տարբերվում տասը գրամ ոսկու համար հաստոց հալող նորօրյա ալքիմիկոսներից և ողորմելի չինովնիկներից՝ որ համոզված վերակառուցողներ էին, որովհետև վերակառուցման արդյունքում հին կառուցից բավական անտեր ու անպետք նյութ էր մնալու իրենց: Ոչ մի բանով չենք տարբերվում, կողոպուտի, առուփախի մոլուցքը մեզ էլ է բռնել:

Այսպես աղատուվե՞լ, այսպես մոռանա՞լ, թե ում հետնորդներն ենք, այսպես ուրանա՞լ, թե ինչի էնք կոչված, գրչեղբայրներին այսպես դատարանների ու իշխանությունների դրնե՞ղը գցել... ամբողջ գործով ծաղրել դատարանն ու դատավորներին, ողջ կյանքով ազատ ու հեռու լինել իշխանավորներից և հետո նրանցի՞ց հայցել քո արդարությունը: Պարզ չէ՞ միթե, որ նրանք իրենց վրեժի ժամին էին սպասում, որ նրանց համար հավիտենորեն «այդ գրողները մի բան չեն»: Շատ ավելի լավ չէ՞ր լինելու արատավորեկնք մեր իսկ ծնողների անունները, որովհետև ծնողը մեր անձի ծնողն է, իսկ գրողը...

Դուք դեռ աղջիկ ու տղա եք ունենալու, որ չարչիների բազմության միջից զատվելու, ձգտելու են մի բարձր ոգեղեն բանի, և այդ բանը Յայ մեծ գրականության մեջ են գտնելու, և այդ գրականության նվիրյալներն են դառնալու, և նրանց իղձերը անտեր ու անհասցե չեն թափառելու,- նրանք գիտենալու են, որ իրենք հանգրվան ունեն, որ իրենք անհոգի ու անհայրենիք իրենց հասակակիցների հպատակները չեն,- ինչո՞ւ եք այդքան ընկնելով ու ձեզ թաղված տեսնելով նաև հայոց գրական կյանքը մեռած տեսնում:

Կարելի՞ է այդքան անհավատ լինել:

Կարելի՞ է այդպես անպարտաճանաչ լինել. դարն ու հազար-ամյակը մեկ մեծ հոգիները իրենց մասին խոսրի են սպասում, նրանց անունների շուրջը ազգը տոների է հավաքվում - մենք ենք այդ խոսքն ասողը, ընկած մարդու մեր ո՞ն իրավունքով:

Կարելի՞ է այսքան անիրավ լինել - քանիել նի բան, որ հարյուրամյակներում հազիվ է գլուխ եկել, որ մեծ թուժանյանի ստեղծածն է, Խափակյանի, Տերյանի, Շանթի, Աղբայանի, Չարենցի, Դեմիրճյանի, Զորյանի, Բակունցի... Ինչո՞ւ, հանուն ինչի՞: Որովհետև առաջադեմ երկրներում գրողները միությունների՞ մեջ չեն, կամ նի քանի միությա՞ն մեջ են: Նրանց այդպես է հարմար, իսկ մենք մինչև Ե՞ր ենք ուրիշների տներին նայելով՝ մեր տունը քանիելու, ուրիշների խոսքին ունկնդիր՝ մեր խոսքը մոռանալու, ուրիշների պատկերին գերի՝ մեր սրբապատկերը ոտնատակելու:

Գրողների միությունը եղել է և լինելու է:

Գրողների մեկ միություն է լինելու՝ նի դեկավարությամբ, և սրա հացն է լինելու այստեղի և ամենուրի գրողների ու նրանց միությունների ու ոչ միությունների հետ կապերն ու հարաբերությունները, առաջարկմերն ու պահանջմերը, ծանոթությունն ու բարեկամությունը, բանակրիզն ու երկխոսությունը. այս դեկավարությունն իր հացից է զրկվելու ի պատիժ Նարեկացու, ասենք, այսօրվա լորության, այլ երկրներից ու գրականություններից այս մեկուսացվածության, եթերն ու գրաշուկան հեղեղած այս հիմար անպատճանատվության. այլապես՝ ո՞վ է մեղավոր, ո՞ր միությունը, միություններից ո՞ր մեկը:

Գրողների միությունը պետք է լինի, եթե անգամ գրական երկի ու գրողական կյանքի մեջ նրա դերը գրոյական է, որովհետև՝ ապա նի պատկերացրեք, որ չկա այդ գրոյական Միությունը... Խոսքս դատավորների ու իշխանավորների սկ երևակայությանը չի ուղղված, խոսքս այն շատերի, շատ-շատերի հետ է, ովքեր իրենց ու իրենց ազգին գրականություն ու գրողի առաքինություն են վերապահում: Զգիտեմ, առանց այդ Միության իմ սիրոտը խառնում ու գլուխս պտտվում է, իմ հայրենիքից, իմ ժամանակից ես ինձ վտարված եմ տեսնում: Եվ կարծեմ՝ ոչ միայն ես: